Գրիգորի բոլորովին ամենայն ոսկերօքն հանդերձ յաշխարհն Հայոց յԱյրարատեան գաւառն ի Վաղարշապատ քաղաք, և հանգուցեալ ի նորաշէն յարկս եկեղեցւոյն, զոր մեծին Ներսիսի շինեալ էր յանուն սրբոյն Գրիգորի։ Այս եղաւ Ներսէս Գ. Շինող կաթուղիկոսի ժամանակ (632—671 թ), որն և կանգնեց Ս. Լուսաւորչի յիշատակի համար մի հոյակապ եկեղեցի. Նորա աւերակներն այսօր էլ կան Վաղարշապատի արևելեան կողմը Երևանու Ճանապարհի վերայ և կոչւում են Խանգարած Եկեղեցի։ Հին ժամանակ այդ եկեղեցու անունն էր «Առապարի Ս. Գրիգոր» կամ «Զուարթնոց Եկեղեցի». Սէբէոս եպիսկոպոսն Է. դարում այդ եկեղեցու մասին պատմումէ, թէ Ներսէս Գ. կամեցաւ «շինել իւր բնակութիւն մերձ առ սուրբ եկեղեցեացն որ ի Վաղարշապատ քաղաքին ի վերայ Ճանապարհին, յորում ասեն, ընդ առաջ եղև թագաւորն Տրդատ սրբոյն Գրիգորի. շինեաց անդ և եկեղեցի մի յանուն երկնաւոր Զուարթնոցն, որոց երևեալ ի տեսլեան սրբոյն Գրիգորի. և շինեաց եկեղեցին բարձր շինուածովք և չքնաղ զարմանալեօք արժանի աստուածային պատուոյն, որումնուիրեացն»։ Իսկ Յովհաննէս կաթուղիկոս Դրասխանակերտցին յիշատակումէ, որ Ներսէս Գ. նոյն եկեղեցու հիմքումն ամփոփեց Ս. Լուսաւորչի մասունքները, «ի ներքոյ չորից սեանցն հաստահեղու-